

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

347
4-21

ՀԲՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ԱՐԴԺՈՂԿՈՄՍՏԻ

1935



347
10-21

ԿԱՆՈՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԳՂՈՒՆ Ա

ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ

1.—Յուրաքանչյուր գյուղական խորհրդի սահմաններում հիմնվում է գյուղական դատարանը:

2.—Գյուղական դատարանը գործում է նախագահի կամ նրա տեղեկակրի և ժողովրդական յերկու ատենակալներին կազմով:

3.—Նախագահին և նրա տեղակալին ընտրում է գյուղական խորհրդի պլենումն իր կազմից և հաստատում է շքանային Գործադիր կոմիտեն:

4.—Ժողովրդական ատենակալներն ընտրվում են մեկ տարի ժամանակով գյուղի ընտրական իրավունք վայելող քաղաքացիներին ընդհանուր ժողովներում 15-ից մինչև 50 հոգի, նայած գյուղի բնակչության թվին, ավյալ գյուղի սահմաններում ապրող և ՀՍՊՀ սահմանադրության հիման վրա ընտրական իրավունք վայելող յերկու սեռի աշխատավորներին թվից և հաստատվում են գյուղխորհրդի պլենումի կողմից: Ժողովրդական ատենակալների թեկնածուներ առաջարկվում են գյուղատնտեսական և անտառային բանվորների արմիություն տեղական կազմակերպություններին, բարակներին ու չքավորներին խմբակներին, բանվորուհիներին ու գեղջկուհուհուներին պատգամավորական ժողովների, գյուղացիական փոխօգնության կոմիտեների և հասարակական այլ կազմակերպությունների կողմից: Նաև կարող են առաջարկվել ընտրական իրավունք վայելող անհատ քաղաքացիներին կողմից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ժողովրդական ատենակալները կարող են հետ կանչվել իրենց ընտրողներին կողմից գյուղական խորհրդի անդամների հետ կանչվելու վերաբերյալ սահմանված կարգով: Նախագահը, տեղեկալը և ժողովրդական ատենակալներն ընտրվում են այնքան ժամանակով, վորքան ժամանակով ընտրվում են գյուղական խորհրդի անդամները:

5.—Ժողովրդական ատենակալներին ընտրությունը կարող է բեկանել գյուղական խորհուրդը:

6.—Ժողովրդական ատենակալները գյուղական դատարաններին նիստերին մասնակցում են գյուղական դատարանի սահմանած հերթի կարգով:

7.—Գյուղական դատավորը և ժողովրդական ատենակալները վոչ մի վարձատրություն չեն ստանում: Գյուղական դատարանն ոգտվում է գյուղական խորհրդի ապարատից:

ԳՂՈՒՆ Բ

ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

8.—Գյուղական դատարանը ջննում է քաղաքացիական գործերը վերաբերյալ՝ ա) գույքային վեճերը, վորոնց զինը 75 ոուրլուց ավելի չե, բ) անաշխատունակ ամուսիններին ապրուստի միջոց տալու վերաբերյալ պարզ հարցերը, գ) հողային վեճերը, յերը կողմեր են հանդիսանում առանձին տնտեսությունները կամ առանձին քաղաքացիները՝ անկախ հայցի դումարից, յեթե այդ վեճերը ծագում են վոչ հողաշինարարության ժամանակ, նաև ընտանիական գույքային բաժանումներին վերաբերյալ գործերը: դ) վարձու աշխատավորների և աշխատավոր վարձողների (անհատական աշխատավոր տնտեսություններին, տնայնագործներին, արհեստավորներին և այլն), նաև հառարակական հովիվների և նրանց վարձողներին միջև աշխատանքային վեճերը, վորոնց արժեքը 25 ոուրլուց ավելի չե:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գյուղական դատարանները ջրնում են բատրակների ու հովիվների և նրանց վարձողների միջև ծագած վեճերը՝ հատուկ որենքի հիման վրա:

9.—Գյուղական դատարանը ջննում է հետևյալ քրեական գործերը:—

ա) Հասարակական ապահովությունն ու կարգը խախտելու մասին:

բ) Ժողովրդական առողջությունը պաշտպանող կանոնները խախտելու մասին:

գ) Մրիկայության մասին:

դ) Զապրուտության մասին:

յե) Բանավոր, գրավոր կամ գործողություններ վիրավորանք հասցնելու մասին:

զ) Առանց մարմնական վնասվածք պատճառելու հարվածներ հասցնելու մասին:

հ) Կրոնտեսականների և մեհատնտեսների անհատական (վոչ հանրայնացված) գույքի փորը գողություններին, վոչնչացումներին կամ վնասներին վերաբերյալ գործերը, վորոնք կատարված են առաջին անգամ և յեթե վնասի չափը 50 ոուրլուց չի գերազանցում:

ը) Այն գործերը, վորոնք կապված են չքավոր ու միջակ տնտեսություններին կողմից պետական և հասարակական առաջարկությունները չկատարելու հետ, յեթե գյուղխորհրդի կարծիքով այդ տնտեսություններին ղեկավարներին նկատմամբ ավելի նպատակահարմար են կիրառել հասարակական ներգործության միջոցներ, ջան յենթարկել նրանց դատական կամ վարչական պատասխանատվության:

3721

10.—Քրեական գործերը վերաբերմամբ գյուղական դատարանը կիրառվում է ներգործութեան հետևյալ միջոցներից մեկը.
ա) Նախազգուշացում.

բ) Հասարակական պարտավանք մամուլում հրատարակելով, կամ առանց դրան, կամ թե գյուղական ժողովում հայտարարելով.

գ) Դրամական տուգանք մինչև 25 ռուբլի, վորն ոգտագործվում է տեղական նշանակութուն ունեցող ընդհանուր կուլտուրական ձեռնարկումների և տեղական հասարակական կազմակերպութիւնների առանձին կարիքների համար.

դ) Պատճառած գույքային վնասի հատուցումն 50 ռուբլուց վոչ ավելի.

յե) Հարկադիր աշխատանքներ՝ մինչև 15 ուր ժամանակով:

11.—Կանոնադրութեան 8 և 9 հոդվածներով մատնանշված գործերը գյուղական դատարանը քննում է հետևյալ կարգով.—

ա) Քաղաքացիական գործերը քննում է այն գյուղական դատարանը, վորի շրջանում մշտապես ապրում է կամ մշտական զբաղմունք ունի դատակիրը (պատասխանողը).

բ) Քրեական գործը քննում է այն գյուղական դատարանը, վորի սահմաններում տեղի յե ունեցել արարքը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ջանադան գյուղխորհուրդների սահմաններում ապրող քաղաքացիների գործերն ու վեճեր կարող են քննվել գյուղական դատարանների կողմից, յերբ շահագրգռված անձը դիմում է այն դատարանին, վորը գտնվում է պատասխանատվութեան յենթարկվող անձի բնակութեան տեղում:

12.—Յեթե գյուղական դատարանը դառնում է, վոր գործն իր իրավասութեան յենթակա չէ, գործն ուղարկում է համապատասխան գյուղական կամ ժողովրդական դատարանին և այդ մասին հայտնում է կողմերին:

ԳՂՈՒՆ Գ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ (ՆԱԽԱԳԱՀԻ) ՅԵՎ ԺՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

13.—Գյուղական դատավորը և ժողովրդական ատենակալները չեն կարող մասնակցել գործի քննութեանը, յեթե նրանք ուղղակի կամ անուղղակի կերպով շահագրգռված են գործի յիջով կամ կողմերի հետ ազգակցական կամ խնամեական կապեր ունեն կամ առանձին հարաբերութեան մեջ են:

14.—Այս կանոնադրութեան 13 հոդ. մատնանշված առիթները յեղած դեպքում դատավորը կամ ժողովրդական ատեն-

կաները իրենք պետք է հրաժարվեն գործին մասնակցելուց. այս դեպքում գյուղական դատավորին փոխարինում է նրա տեղակալը, իսկ ժողովրդական ատենակալներին՝ մյուս ժողովրդական ատենակալները՝ հերթի կարգով:

15.—Քաղաքացիական գործերում կողմերը (հայցվոր և դատակիր), իսկ քրեական գործերում՝ տուժողը և մեղադրյալն իրավունք ունեն մերժում հայտնելու թե գյուղական դատավորի (նախագահի) և թե ժողովրդակալտն ատենակալների դեմ:

16.—Պատճառարանված մերժումը հայտնվում է դատական նիստը բանալիս և ըննվում է գործին մասնակցող դատավորներին կողմից, մերժվող անդամի բացակայութեամբ: Ջայների հավասարութեան դեպքում դատարանի տվյալ անդամը համարվում է մերժված:

ԳՂՈՒՆ Գ

ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

17.—Գյուղական դատարանում գործերը կարող են հարուցվել կողմերի թե բանավոր և թե գրավոր հայտարարութեամբ, նաև շահագրգռված անձանց կամ արհեստակցական ու հասարակական կազմակերպութիւնների հայտարարութեամբ:

18.—Հայտարարութիւնները տրվում են գյուղական դատարանի նախագահին կամ նրա տեղակալին. բանավոր հայտարարութիւնն իսկույն մացվում է արձանագրութեան մեջ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գյուղական դատարանին տրվող բոլոր հայտարարութիւններն ազատվում են միասնական պետական տուրքից:

19.—Գյուղական դատարանում ստացված ամեն մի գործ պետք է լուծվի ստացվելուց հետո 7 ուրվա ընթացքում: Բացի աշխատանքային գործերից, վորոնք պետք է լուծվեն 3 ուրվա ընթացքում:

20.—Գործը լսելու որդա մասին գյուղական դատարանում հայտարարութիւն և կախվում, և կողմերին ու վկաներին տեղեկութիւն և տրվում գյուղաբնակի (գյուղ. կատարածուների) միջոցով:

21.—Գործի դատաքննութիւնը տեղի յե ունենում դռնբաց և բերանացի:

22.—Նիստը բանալուց հետո նախագահը կողմերին, ինչպես նաև մեղադրյալին բացատրում է, վոր նրանք իրավունք ունեն մերժում հայտնելու թե գյուղակալտն դատավորի և թե ատենակալների դեմ:

23.—Գյուղական դատարանը պարզում է, թե կողմերից, վկաներից և գործին մասնակցողներից ով է ներկայացել նիս-

տին և վճռում ե՛ կարելի՛ յի գործն այդ պայմաններում լսել թե՛ վոչ:

24.—Կողմերի առանց հարգելի պատճառների չնհրկայանալը չի կասեցնում գործի դատաքննութիւնը, յեթե դատարանը նրանց ներկայանալը անհրաժեշտ չի համարում:

25.—Վկաների կամ գիտակ անձանց առանց հարգելի պատճառների (հիվանդութիւն, գյուղից բացակայութիւն և այլն) չնհրկայանալու դեպքում գյուղական դատարանը կարող է նրանց տուգանել մինչև յերեք ռուբլի:

26.—Վերավորանքներ և հարվածներ հասցնելու կամ ծեծելու գործեր (9-րդ հոդ. «Յե» և «Զ» կետերը) քննելիս տուժողի չնհրկայանալու դեպքում գործը կարճվում է, սակայն մեղադրյալը իրավունք ունի ինդրելու, վոր գործն ըստ էյության քրննվի Յուրաքանչյուր այսպիսի դեպքում գյուղական դատարանը պարտավոր է գործը քննել:

27.—Քաղաքացիական գործերում կողմերը (հայցվոր և դատակիր), ինչպն նաև քրեական գործերում տուժողը և մեղադրյալը պետք է ապացուցեն այն հանգամանքները, վորոնց վրա նրանք հիմնվում են, մասնավորապես՝ հայցվորը պետք է ապացուցի իր պահանջի հիմքը և չափը:

28.—Գործի վերաբերյալ ապացույցները կարող են ծառայել վկաների ցուցմունքները, ամեն տեսակ զբավոր փաստաթղթերը, գիտակ անձաց յեզրակացութիւնները և իրային ապացույցները:

29.—Այս կամ այն ապացույցներն ընդունելը վորոշում է գյուղական դատարանը, նայած թե ամյալ ապացույցը գործի համար եյական նշանակութիւն ունի, թե՛ վոչ:

30.—Գյուղական դատարանը նաև իր նախաձեռնութիւնը կարող է ապացույցներ հավաքել, այն ե՛ հարցաքննել վկաներին ու գիտակ անձանց, պահանջել այս կամ այն փաստաթղթերը, գննութիւն կատարել և այլն, յեթե նա այդ անհրաժեշտ է համարում:

31.—Վկաներին հարցաքննելուց առաջ դատարանը պարզում է կողմերի և վկաների փոխհարաբերութիւնը, ինչպես նաև նախազգուշացնում է վկաներին, վոր սուտ վկայութիւն տալու համար նրանք պատասխանատու յեն ժողովրդական դատարանի առջ:

32.—Վկաները հարցաքննելուց առաջ չեն կարող ներկա լինել գործի քննութիւն:

33.—Յեթե քաղաքացիական գործերում կողմերից մեկին հայանի յե, վոր վկան շահագրգռված է գործի յելքով, կամ վկայի և կողմի միջև հատուկ փոխհարաբերութիւն գոյութիւն ունենալու դեպքում, գյուղական դատարանն իր հայեցողութիւնը

կարող է հարցաքննել կամ չհարցաքննել այդ վկային Գրեական գործերում թույլ է տրվում հարցաքննել վկաներին, անկախ կողմերի և վկաների փոխհարաբերութիւնից:

34.—Գյուղական դատարանը գործը կողմերի հայտարարութիւն հետևանքով կարող է կարճել միայն այն դեպքում, յերբ այդ հաշտութիւնը չի հակասում գործում մասնակցող տնտեսապես թույլ կողմերի շահերին:

35.—Յերբ գյուղական դատարանը գտնում է, վոր դատական քննութիւնը գործը բավականապի պարզված է, հետանում է խորհրդակցութիւն և վորոշում է կայացում: Խորհրդակցութիւն ժամանակ կողմակի անձինք չեն կարող ներկա լինել:

36.—Գյուղական դատարանը կազմում է գործի վերաբերյալ համառոտ արձանագրութիւն, վորը պետք է պարունակի՝ ա) Արձանագրութիւնը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը:

բ) Դատավորների անունները և ազգանունները:

գ) Հայցվորի և դատակիրի կամ տուժողի և մեղադրյալների անունները և նրաց սոցիալական դրութիւնը:

դ) Վկաների ձամառոտ ցուցմունքները:

ե) Գյուղական դատարանի վորոշումն անանց պատճառաբանութիւն:

37.—Գյուղական դատարանի վորոշումը կայացվում է ձայների մեծամասնութիւնը, դատավորներից վոչ վոք չի կարող ձեռնադրան մնալ, յուրաքանչյուր դատավոր կարող է հայտնել իր առանձին կարծիքը, վորը չի հայտարարվում, սակայն կցվում է արձանագրութիւնը: Ժողովրդական տեսնակալի անգրագիտութիւն դեպքում նախագահն ինքն է ձեակերպում նրա կարծիքը, վորը կցվում է արձանագրութիւնը:

38.—Վորոշումը ստորագրվում է դատավորի կողմից և հայտարարվում է դռնբաց նիստում: Ժողովրդական ասենակալի անգրագիտութիւն դեպքում նախագահն ինքն է ստորագրում նրա փոխարեն, այս մասին համապատասխան հիշատակութիւն անելով արձանագրութիւն մեջ:

ԳՂՈՒՒՅՑ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

39.—Գյուղական դատարանի վորոշումները վերջնական են և զանգատարկման յենթակա չեն, սակայն ժողովրդական դատարանը, վորի շրջանում գործում է գյուղական դատարանը, իրապասու յե հսկողութիւն կարգով բեկանել գյուղական դատարանների վորոշումները և կայացնել նոր վորոշում:

Հսկողութիւն կարգով գործը ժողովրդական դատարանը մտցնելու դեպքում ժողովրդական դատավորը դադարեցնում է գյուղատարանի վորոշման կատարումը:

ԾԱՆՈԹՈՒԹՅԱՆ.—Գյուղական դատարանների վորո-

շումները հսկողութեան կարգով բողոքարկելու համար սահմանվում է տասն որվա ժամանակամիջոց:

40.—Յեթե գյուղական դատարանը գտնուում է, վոր իր իրավասութեան յենթակա գործն իրեն ընույթով բարդ է կամ պահանջում է ավելի խիստ միջոցներէ կիրառուում, քան այդ նախատեսված է այս որենքի 10-րդ հոդվածով, նա գործն ուղարկում է համապատասխան ժողովրդական դատարանին և այդ մասին հայտնուում կողմերին:

Ժողդատավորին վերապահվում է իրավունք՝ ինչպես իր նախաձեռնութեամբ, նույնպես և դատախազութեան հայտարարութեամբ քննութեան առնել ամեն մի գործ, վորը յենթակա չէ գյուղդատարանի իրավասութեան:

ԳՂՈՒԽ Զ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՅԵԿ
ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՇՐԱՇԱՆԳՈՒՄԸ

41.—Գյուղական դատարանների վորոշումների կատարումը քաղաքացիական գործերի վերաբերմամբ ղրվում է գյուղական կատարածունների վրա. կատարման համար արվում է գյուղդատարանի վորոշման պատճենը, վորը կատարողական թերթի ուժ ունի:

Քրեական գործերի վերաբերյալ վորոշումները, վորոնց հիման վրա պետք է սուղանք դանձել կամ հարկադիր աշխատանքներ նշանակել, ի կատար են անվում գյուղխորհուրդների կողմից, վորոնց կատարման գործողութեաններն ավարտելուց հետո վճռի պատճենը համապատասխան մակադրութեամբ վերադարձնում են գյուղական դատարաններին:

42.—Գյուղական դատարանների ընդհանուր ղեկավարութեանը ղրվում է Գերագույն Դատարանի վրա: Գյուղական դատարանների գործունեյութեան հսկողութեանն իրագործում են ժողովրդական դատարաններն ու դատախազութեանը:

43.—Այս կանոնադրութեան հրատարակմամբ վերացվում են ՀՍՈՂ Կենտրոնականի 1927 թ. սեպտեմբերի 18-ի «Գյուղխորհուրդներին առնթեր դատական սեկցիաներ հիմնելու մասին» վորոշումը (որ. և կարգ. ժող. 1927 թ. № 14, հոդ. 94), ինչպես նաև ՀՍՈՂ Արդժողկոմատի 1927 թ. հոկտեմբերի 1-ի Կենտրոնականի «Գյուղխորհուրդներին առնթեր դատական սեկցիաներ հիմնելու վերաբերյալ վորոշումը կիրարկելու մասին» հրահանգը (որ. և կարգ. ժող. 1927 թ. № 14, հոդ. 95).

Սեան-Քանաքեռչինի

Գլավիտ № 25

